«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման

Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորումը գրականության դասավանդման գործընթացում

Առարկան՝

Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Նաիրա Խաչատրյան

Ուսումնական հաստատություն՝ Օհանավանի միջնակարգ դպրոց

Երևան 2023

Ներածություն

Ժամանակակից մանկավարժության նպատակը ուսուցման և դաստիարակման գործընթացը արդի կյանքի պահանջներին համապատասխանեցնելն ու առավելագույնս անձնակենտրոն դարձնելն է : Իսկ անձնակենտրոն ուսուցումն այն ուսուցումն է, որի առանցքում դրվում է երեխայի անձը, նրա ինքնատիպությունը, արժեքը: Կրթության բովանդակությունը, նրա միջոցներն ու մեթոդները այնպես են կառուցվում, որ սովորողին առարկայական նյութի, նրա ձևի և տեսակների ընտրության հնարավորություն են տալիս: Այդ նպատակով կազմվում են այնպիսի ուսումնական ծրագրեր, որոնք նպաստում են հետազոտական մտքի զարգացմանը: Սովորողը մշտապես հանդես է գալիս որպես գործող անձ, մասնակից, ոչ թե հանդիսատես, իսկ հաճախ էլ՝ սեփական կրթության գործընթացը նախաձեռնող:

Ուսուցման գործընթացում այսօր կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների ձեռքբերումը, այլև այդ գիտելիքները կյանքում կիրառելու, ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների և հմտությունների ձևավորումը: Ժամանակակից պատկերացումների համաձայն՝ ուսուցման գործընթացը ուսուցչի և աշակերտների ներդաշնակ գործունեություն է, որի ընթացքում իրականանում են որոշակի գիտելիքներ ձեռք բերելու, դրանց համապատասխան՝ կարողություններ, հմտություններ ձևավորելու նպատակադրումները, ինչպես նշել է մեծ մանկավարժ Ա. Բալյանը.«Ուսուցումը բարդ պրոցես է, որի ընթացքում խթանվում ու կառավարվում են վերջինիս ուսումնական ճանաչողական ակտիվությունն ու ինքնուրույնությունը»:[1]

Հայոց լեզվի և գրականության ուսուցման համակարգը, բացի բուն առարկայական և մասնագիտական կրթություն ապահովելու խնդրից, ունի մեկ այլ կարևոր հիմնախնդիր. արդեն դպրոցական նստարանից սովորողներին ընդգրկել հասարակական բազմաբնույթ հարաբերությունների մեջ՝ ձևավորելով ճանաչողական-տրամաբանական , համագործակցության, հաղորդակցման, ստեղծագործական կարողություններ, ինչպես նաև ինքնուրույն գործունեություն ծավալելու, որոշումներ կայացնելու և այդ որոշումների համար պատասխանատվություն կրելու հմտություններ :

---

[1] *Ա.Ա.Բալյան «Մանկավարժական հոգեբանության հարցեր» Երևան 1983 /էջ 175/*

Այսօր հանրակրթության մեջ առկա մի շարք խնդիրներ որոշակի առումով խտացվել և հատկապես տեսանելի են դարձել գրականության դասավանդման բնագավառում: Գրականությունն էապես առանձնանում է հանրակրթական մյուս առարկաներից միայն իրեն բնորոշ առանձնահատկություններով, ինչպես նաև անձի ձևավորման ու կրթության գործում՝ հնարավորությունների բազմազանությամբ: Այս առարկայի արդյունավետ ուսուցումը լուծում է բազմաթիվ կարևոր խնդիրներ . «ձևավորել գիտական աշխարհայացք, լուծել գաղափարական, քաղաքական, գեղագիտական, բարոյական և աշխատանքային դաստիարակության բազմազան խնդիրներ....»[2]: Կարդալով, ընկալելով, վերլուծելով ու մեկնաբանելով գրական ստեղծագործությունները՝աշակերտները պետք է հանդես բերեն բանավոր ու գրավոր խոսքի կարողություններ, վերլուծական, ստեղծագործական միտք, երևակայություն, համադրելու, հակադրելու և այլ կարողություններ: Բոլոր այս կարողությունները անհրաժեշտ են մարդուն կյանքի ընթացքում ՝ անկախ մասնագիտությունից: Եվ այս ամենը ձեռք բերելու ամենաարդյունավետ ձևը գրականության դասն է:

Գրականություն բառը «grammatike» բառի թարգմանությունն է, որ նշանակում է կարդալու և գրելու արվեստի երկմիասնություն: Գրականությունը՝ որպես դպրոցական առարկա,երկու ուղղվածություն ունի, և հանրակրթական դպրոցում գրականության դասավանդման խնդիրները հենց այդ երկու ուղղությամբ էլ պետք է դիտարկվեն:Առաջին դեպքում գրականությունն անհրաժեշտ է դիտարկել որպես խոսքի արվեստ , երկրորդ դեպքում՝ որպես կարդալու և գրելու կարողությունների ձևավորմանը նպաստող բացառիկ երևույթ:

Երկու դեպքում էլ ուսուցման սուբյեկտը ընթերցող- աշակերտն է, սովորող, ում համար ընթերցանությունը պահանջ է, անբաժան սովորույթ, ում գիրքը ավելի է ձգում, քան հեռուստացույցը, համակարգիչը, հեռախոսը, որոնք այսօր բարեհաջող փոխարինել են գրքին: «Գիրքը մարդու համար անհատնում գիտելիքի աղբյուր է: Ուսուցչի հիմնական խնդիրներից է աշակերտներին սովորեցնել սիրել գիրքը, նոր գիտելիքներ քաղել նրանից....»[3]: Բայց այսօր ընթերցասեր աշակերտ ձևավորելը գրականության հանրակրթական դասընթացի ողջ շղթայում ամենաբարդ խնդիրն է: Այն շատ ավելի

---

[2] *Հ.Մ. Մախչանյան «Հայ գրականության ուսուցման պատմություն» Երևան 1979 /էջ 401/*

[3] *Ա.Տեր-Գրիգորյան «Ընթերցանության մեթոդիկա» Երևան 1978/էջ 7/*

դժվար է իրականացնել, քան նույնիսկ գրական ստեղծագործության ուսումնասիրությունը, վերլուծությունը, գրական–տեսական գիտելիքների սերտումը:Ընթերցասեր աշակերտ ձևավորելու ամենաարդյունավետ ժամանակը մանկական հասակն է:Եթե այս տարիքում ուսուցիչը չի նպաստում այդ կարողության ձևավորմանը, ապա անխուսափելիորեն առաջ է գալիս անտարբերություն դեպի գեղարվեստական խոսքը, գեղագիտական ճաշակի , պատկերային մտածողության բացակայություն: Աշակերտն այսօր խուսափում է ընթերցել ծրագրային նույնիսկ ամենահետաքրքիր երկերը, իսկ արևմտահայերենով, Թիֆլիսի բարբառով գրված երկերի ընթերցանության մասին խոսք լինել չի կարող:Որովհետև նույնիսկ ընթերցասեր աշակերտը այդ երկերն ընթերցելիս, հանդիպելով դժվարությունների,այն է՝ անհասկանալի բառերի, քերականական ձևերի, հիասթափվում է, հրաժարվում գիրքն ընթերցելուց: Այս պարագայում է, որ պետք է երևա ուսուցչի հմտությունը: Նա պետք է այնպիսի մեթոդներ գտնի, որ նախ՝ հետաքրքրություն առաջացնի ստեղծագործության հանդեպ, ապա ՝ օգնի աշակերտին հասկանալ, յուրացնել երկը, աշակերտների համար «անհետաքրքիր, բարդ» ստեղծագործություններն այնպես մատուցի, որ դասը դառնա հետաքրքիր, գրավիչ գործընթաց: Այսպես՝ գրական երկի մատուցումը բեմականացմամբ նոր հնչեղություն, կենդանի օրինակի արժեք է տալիս ստեղծագործությանը, մեծանում է ոչ միայն երկի դաստիարակչական նշանակությունը, այլև հետաքրքրությունն այդ երկի հանդեպ,որովհետև ավելի մատչելի է դառնում և ընկալելի: Իսկ եթե աշակերտը ուսումնառության ընթացքում հանդիպում է դժվարությունների, նրա մեջ ծնվում են բացասական հույզեր, և նա հրաժարվում է տվյալ առաջադրանքը կատարելուց: Իսկ եթե այդ դժվարությունները շարունակական են, ապա բացասական վերաբերմունք է առաջանում դեպի առարկան: Այնինչ գրանցվող հաջողությունը հաճելի զգացողության հիմք է դառնում, որն էլ ապահովում է դրական հույզերի առկայությունը ուսման հանդեպ: Ուսուցման գործընթացն աշակերտների համար ավելի հետաքրքիր , ոգևորիչ է համագործակցային ուսուցմամբ: Այս դեպքում խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը դրդապատճառ է դառնում ուսուցման գործընթացի համար: Երբ նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքր մասերի, որոնք ավելի հեշտ են յուրացվում աշակերտների կողմից և լավ ներկայացվում , աշակերտները խրախուսանք են ստանում աշխատանքի համար , ինչն էլ դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան:

Համագործակցային ուսուցման առանձնահատկությունները

Համագործակցային ուսուցումը համատեղ սովորելու եղանակ է, երբ խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ներգրավված է ակտիվորեն,և գիտելիքը մշակվում ու հարմարեցվում է վերափոխման միջոցով: Այլ խոսքով՝ համագործակցային ուսուցումը սովորելն է խոսելու միջոցով, երբ մեկը մյուսին օգնում է ըմբռնելու նյութը: Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը,այլև խմբային զարգացման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ:Այն մեծացնում է սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը: Երբ համագործակցայի նուսուցումը կիրառվում է խորությամբ, այն դառնում է դասարանի աշխատանքային մշակույթ: Համագործակցային ուսուցումը առավել արդյունավետ է միայն այն դեպքում, եթե այն իրապես համագործակցային է և ոչ թե պարզապես ավանդական խմբային աշխատանք կամ միայն ինտերակտիվ (փոխներգործուն) վարժություն:Այս ուսուցման ներդնումը ամենևին չի նշանակում հրաժարում ավանդական մոտեցումներից: Դա նշանակում է աշխատանքի արդյունավետեությունը բարձրացնող ևս մեկ միջոցի ներդնում: Համագործակցայի նուսուցումը հնարավորությունէ է տալիս ուսուցչին դասապրոցեսը դարձնել ավելի բազմազան ու հետաքրքիր:

Ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը:Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել լավ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնություն, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներից են.

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը
- հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովումը
- սթրեսի հաղթահարումը

• շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Դասի բոլոր փուլերում պիտի ապահովվեն համագործակցային ուսուցման հետևյալ տարրերը.

• դրական փոխկապակցվածություն

• անհատական պատասխանատվություն

• խմբերով աշխատանքի հմտություններ

• խմբային գործընթաց

Համագործակցային ուսուցումն ակնկալում է ուսուցչի դերի փոփոխություն. ուսուցիչն առաջնորդում և ուղղորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությունը խթանող միջավայր: Ուսուցիչը հրամայողից վերափոխվում է աջակցողի և դիտարկողի:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ.

• առաջադրանքների պլանավորում

• սովորողների խմբերի ձևավորում

• առաջադրանքների ներկայացում և բացատրում

• խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն

• օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում

• գնահատում

Համագործակցային ուսուցմամբ է նպատակահարմար կազմակերպել այն ստեղծագործությունների ուսուցումը , որոնց ուսուցման գործընթացում առաջանում են բարդություններ, այն է՝ աշակերտները, հանդիպելով դժվարությունների , հիասթափվում են , նրանց մոտ առաջանում է բացասական վերաբերմունք տեքստի հանդեպ, որն էլ խոչընդոտում է երկի ուսուցումը:

Օրինակ՝ Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգության ուսուցման ընթացքում մի շարք խնդիրներ են առաջանում . աշակերտները տեքստում հանդիպելով մեծ քանակությամբ անհասկանալի բառերի , քերականական ձևերի , հիասթափվում են , կորցնում հետաքրքրությունը նյութի հանդեպ:Իսկ օգտագործելով համագործակցային մեթոդներ՝ ուսուցիչը կկարողանա ուսումնական գործունեությունը հասցնել նպատակակետին:

Այս աշխատանքը ծավալուն , հաջորդական քայլերով զարգացող ուսումնական գործունեություն է, որի գլխավոր նպատակը աշակերտի մեջ զարգացնել ինքնուրույն

աշխատանքով գիտելիք ձեռք բերելու հմտություններ: Այն ուսուցչից պահանջում է մեծ եռանդ, համբերություն և լուրջ պատրաստվածություն:Աշխատանքներն աշակերտներին հանձնարարելիս նա պետք է հաշվի առնի աշակերտների ընդունակություններն ու հնարավորությունները, ստեղծի այնպիսի մթնոլորտ, որ դասարանում յուրաքանչյուր աշակերտի աշխատանքը կարևորվի , գնահատվի: Կարևորը, որ ոչ մի աշակերտ չմեկուսանա դասարանից , իրեն զգա խմբի լիարժեք անդամ: Եվ այս ամենը ուսուցչից պահանջում է մեծ վարպետություն , ճկունություն:

Ուսուցման այս գործընթացը թերևս բարդ է ,բայց անցնում է սահուն, հագեցած, կարևորը՝ աշակերտները այդ ընթացքում աշխատում են սիրով, նպատակաուղղված, պատասխանատվությամբ և հաճույքով:Իսկ եթե ուսումնառության ընթացքում կա սեր, ձգտում , ոգևորություն, անհնար է , որ այդտեղ չլինի արդյունք:

«Պեպո» կատակերգության ուսուցման առանձնահատկությունները

Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը ներառված է 8-րդ դասարանի դպրոցական ծրագրում: Տարիներ շարունակ ուսուցիչները բողոքում էին և պահանջում, որ այդ թեման դուրս հանվի դպրոցական ծրագրից՝ հաշվի առնելով այն դժվարությունները, որոնք ծագում էին այդ թեման ուսուցանելիս, այն է՝ անհասկանալի բառերը, քերականական ձևերը աշակերտի մոտ առաջացնում էին բացասական վերաբերմունք տեքստի հանդեպ, որն էլ խոչընդոտում էր երկի ուսուցումը:Սակայն անլուծելի խնդիրներ չկան, **պարզապես պետք է գտնել խնդրի լուծման ճիշտ ուղին**: Այսօր ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպելու համար ուսուցիչը պետք է գտնի և կիրառի ճիշտ մեթոդներ, հնարներ:Ամեն ինչ պետք է անի սովորողի մեջ առարկայի, ուսուցանվող թեմայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար:

Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը ուսուցանելիս ուսուցիչը հանդիպում է դժվարությունների ոչ միայն այն պատճառով, որ անհասկանալի բառեր և արտահայտություններ կան, նաև այն պատճառով, որ գործ ունի դեռահասների հետ:Այս տարիքում սովորողները ինքնուրույն գործունեություն են ծավալում և անընդհատ ձգտում են ընդարձակելու դրա սահմանները: Սրանով նրանք ուզում են շեշտել ,որ իրենք արդեն մեծ են, հասունացել են , այլևս երեխա չեն :Սա նրանց ամենախոցելի տեղն է և ամենագլխավոր նպատակադրումը:

Դեռահասի ուսումնական գործունեության մեջ դժվարություններ և հակասություններ են դրսևորվում, բայց նաև նկատվում են որոշակի առավելություններ, որոնց վրա էլ կարող է և պիտի հենվի մանկավարժը:Մանկավարժ-հոգեբանների կարծիքով դեռահասն աչքի է ընկնում ուսումնական նյութի ընկալման բարձր որակներով:Դեռահասի ամենամեծ արժանիքը ուսումնական բազմատեսակ գործընթացներին մասնակից լինելու պատրաստակամությունն է, քանի որ սրանով նա հենց ինքն իր աչքում է դառնում հասուն մարդ:

Բացի սրանից՝ դեռահասին հրապուրում է դասի ընթացքում ինքնուրույնություն դրսևորելու հնարավորությունը, ինչպես նաև դպրոցի պատերից դուրս ընդհանրապես ճանաչողական գործունեության ծավալումը:Սակայն դեռահասն իր պատրաստակամությունը չի կարողանում գործնականում կիրառել , քանի որ չի

տիրապետում ուսումնական գործունեության բազմազան և նոր եղանակների:Ուուսուցչի խնդիրն է դեռահասին սովորեցնել ուսումնառության այդ նոր եղանակներն ու ձևերը և թույլ չտալ, որ ուսման նկատմամբ հետաքրքրությունը հանգչի:Մանկավարժը մշտապես ականատես է, թե դեռահասն ինչ բուռն ոգևորություն է հանդես բերում ուսումնական նոր առարկայի, նյութի հանդեպ , բայց ինչքան արագ է նա հիասթափվում դրանից:Այսպիսով՝ իմանալով դեռահասին բնորոշ հատկությունները, առավելություններն ու թերությունները՝ ուսուցիչը պետք է այնպես ծրագրի այս թեմայի ուսուցումը, որտեղ սովորողը ունենա մեծ դերակատարում որպես սեփական կրթության գործընթացը նախաձեռնող անձ:Որովհետև տարիքային այս խմբի համար հավասարապես կարևոր են ինչպես ուսումնական նյութի բովանդակությունը , այնպես էլ այդ նյութից գիտելիք քաղելու գործընթացը, միջոցները, եղանակները:Հետաքրքիր են այն դասերը,որոնց ընթացքում սովորողները գիտելիք են ձեռք բերում ոչ միայն դասգրքից , այլև օժանդակ ուրիշ միջոցներից:Իսկ եթե գիտելիքի միակ աղբյուրը դասագիրքն է ,ապա այն դառնում է անհետաքրքիր և միօրինակ: Ուսուցիչը պիտի կարողանա ուսումնական գործընթացը դարձնել «իմացական ուրախության» աղբյուր,մղի աշակերտին ինքնուրույն հետազոտական աշխատանքի,որը նաև նրանց մեծ բավականություն կպատճառի, որովհետև նրանք ուզում են ինքնուրույնաբար հասնել ինչ-որ բանի, գյուտեր և բացահայտումներ անել,և ուսուցիչը պետք է նրանց տա այդ հնարավորություն:

Երկի ուսուցումը համագործակցային մեթոդներով

«Պեպո» կատակերգության ուսուցումը պետք է սկսել Գ.Սունդուկյանի կյանքի գլխավոր դրվագների, գրական-հասարակական գործունեության ներկայացմամբ, ստեղծագործության ընդհանուր բնութագրով: Աշակերտը նախ պետք է հասկանա գրողի թողած վաստակի կարևորությունը, արժևորի նրան և նրա ստեղծագործությունը, ապա և ուսումնասիրի նրա՝ մարդկությանը թողած անզուգական քերթվածքները: Դրամատուրգ Գ.Սունդուկյանն իր ստեղծած կերպարների ամբողջականությամբ, միջավայրի, կենցաղի, մարդկային հոգեբանության ճշմարտացի արտացոլմամբ դարձել է հայ թատերգության ռեալիստական ուղղության սկզբնավորողներից: Մեծ է նրա դերը թատերգության և թատերական արվեստի զարգացման գործում: Դ.Դեմիրճյանի դիպուկ բնորոշմամբ նա «հայ դրամատուրգիայի Աբովյանն է»: Պեպոն՝ Սունդուկյանի համանուն կատակերգության հերոսը, դարձել է հավերժական կերպար իր ազնիվ նպատակների, արդար պայքարի շնորհիվ, մի պայքարի, որ մղվել է արդարության, ճշմարտության համար, որն էլ բոլոր ժամանակների վեհ մղումներից է: Պեպոն «իր վճիտ հոգիի աղբերափայլ գեղեցկությունովը հավիտենականության առջև հոյակապորեն խայք-խայտառակ արեց պժգալի վաշխառու Զիմզիմովին և մեզ զովացրեց մարդկությանը անպատվող զիմզիմովներուն գոյութենեն»[4] :

Գ.Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը հայ թատերգության կարևոր նմուշներից է, և պատահական չէ այս երկի առկայությունը դպրոցական ծրագրում: Ոչ այնքան դյուրին այս թեմայի մատուցումը հնարավորինս արդյունավետ դարձնելու նպատակով 2010 թվականից ի վեր մենք հաջողությամբ կիրառում ենք համագործակցային ուսուցման մեթոդները, որոնք նպաստում են և՛ նյութի յուրացմանը, և՛ անհատական ու խմբային գործունեության հմտությունների զարգացմանը:

Համագործակցային ուսուցման մեթոդները բազմաթիվ են, և ուսուցիչն է ընտրում՝ որ մեթոդներից օգտվել՝ այս կամ այն թեման դասավանդելիս:

Համագործակցային ուսուցման մասին առաջին անգամ խոսվել է դեռևս նախորդ դարի 80-ական թվականներին՝ Սպենսեր Կագանի կողմից: Նա մշակել է խմբային համագործակության եղանակով դասի անցկացման շուրջ 160 կառույց և առաջարկել

[4] Ա.Չոպանյան, Երկեր, Երևան, 1966, էջ 35:

ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք նպաստում են սովորողի անձնական աճին և հետապնդում են չորս հիմնական նպատակ՝ զարգացնել սովորողների կարդալու, գրելու, բանավոր խոսքի և միմյանց լսելու ունակությունները :[5]

Կագանը ձևակերպել է համագործակցային ուսուցման հետևյալ սկզբունքները՝

- Դրական փոխկախվածություն, որը ենթադրում է հանձնարարության ինքնուրույն անհատական կատարում՝ արդյունքը համաձայնեցնելով խմբի հետ՝ որոշակի նպատակի հասնելու համար:
- Անհատական պատասխանատվություն խմբի մյուս անդամների հանդեպ՝ կատարված առաջադրանքի արդյունքի համար,
- Հավասարաչափ մասնակցություն, երբ խմբի ներսում առաջադրանքները բաշխված են համաչափ, մասնակցության պայմանները հավասար են բոլորի համար,
- Միաժամանակյա փոխազդեցություն, երբ խմբի բոլոր անդամները հայտնում են իրենց կարծիքը և միասին որոշում կայացնում:

Արդեն նշել ենք, որ Գ.Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը ներառված է 8-րդ դասարանի դպրոցական ծրագրում՝ յոթ դասաժամով: Այս դասաժամերի ընթացքում աշակերտները պետք է ուսումնասիրեն հեղինակի կենսագրությունն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, թատերգությունը որպես գրական սեռ, «Պեպո» կատակերգության կառուցվածքը, լեզուն, դիպաշարը, կերպարներն ու հիմնական գաղափարը: Սակայն համագործակցային ուսուցմամբ այս գործընթացը դուրս է գալիս ավանդական ուսուցման շրջանակներից:

Այսպես՝ առաջին դասաժամին կամ առաջին փուլում ուսուցիչը ներկայացնում է նախօրոք պատրաստած սահիկաշարը գրողի կենսագրության վերաբերյալ՝ նպատակ ունենալով հետաքրքրություն առաջացնել նոր թեմայի նկատմամբ: Ուսուցիչը ամեն ինչ չէ, որ պետք է ընդգրկի տեսանյութում, այլ աշակերտին ինքնուրույն աշխատելու, իր աշխատանքից բավականություն ստանալու հնարավորություն տա: Սունդուկյանին ներկայացնելով որպես հայ մեծանուն գրողի, դրամատուրգի՝ ուսուցիչը նշում է, որ գրողի կյանքի, ստեղծագործության, մշակութային գործունեությանը մանրամասնորեն ծանոթանալու համար աշակերտները պետք է կատարեն ինքնուրույն հետազոտական աշխատանք, և նրանցից յուրաքանչյուրը պատասխանատու է աշխատանքը ճիշտ

[5] https://www.kaganonline.com/free_articles/dr_spencer_kagan/281/Kagan-Structures-A-Miracle-of-Active-Engagement,2 :

կատարելու համար: Դասարանը բաժանելով խմբերի (մեր դեպքում՝ չորս խմբի)՝ ուսուցիչն ընտրում է ավագներ, խմբերից յուրաքանչյուրին տրվում է հանձնարարություն, այն է՝ համակարգված ներկայացնել տեղեկություն հետևյալ վերնագրերով՝

1-ին խումբ՝ Թիֆլիսը՝ որպես մշակութային քաղաք

2-րդ խումբ՝ Սունդուկյանի կյանքը և մշակութային գործունեությունը,

3-րդ խումբ՝ Սունդուկյանի ստեղծագործությունները,

4-րդ խմբի աշխատանքն է՝ պատրաստված շնորհանդեսը համալրել նոր տեսանյութերով՝ հաշվի առնելով խմբերին հանձնարարված թեմաների հաջորդականությունը:

Խմբերին աշխատանքները հանձնարարելուց հետո ուսուցիչը պետք է նշի նաև այն աղբյուրները, որտեղից կարող են օգտվել նրանք խմբային հետազոտությունն իրականացնելիս: Խմբի ներսում ավագը կատարում է աշխատանքի բաժանում և տալիս հանձնարարականներ, ուսուցիչն էլ ուղղորդում է նրանց, խորհուրդներ տալիս:

Հաջորդ դասին, երբ աշակերտները կատարում են հանձնարարությունները, ուսուցիչն անցնում է երկրորդ փուլին, այն է՝ հանձնարարությունների ստուգում, քննարկում, խմբագրման և համակարգման աշխատանքներ, ժամանակագրության կազմում և այլն: Յուրաքանչյուր խումբ պաստառի վրա ցուցադրում է իր աշխատանքը, ապա աշակերտները ներկայացնում են իրենց հետազոտության արդյունքները, մեկնաբանում: Աշակերտների աշխատանքին հետևելով՝ ուսուցիչը ուշադրություն է դարձնում համագործակցային աշխատանքի վրա՝ ստեղծելով փոխադարձ վստահության մթնոլորտ և համագործակցությանը խթանող միջավայր: Աշակերտներից յուրաքանչյուրը պետք է իրեն պատասխանատու զգա խմբային աշխատանքում, անի առավելագույնը՝ խմբի աշխատանքը լավ ներկայացնելու համար: Բացի այդ, ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը: Շնորհանդես պատրաստած խումբը, մյուս խմբերի աշխատանքներին համապատասխան, ներկայացնում է իր խմբային աշխատանքը: Որպեսզի աշակերտները լսեն իրար, ուսուցիչը դասի սկզբում պետք է շեշտի, որ աշխատանքները ներկայացնելուց հետո խմբերից յուրաքանչյուրը ներկայացնելու է իր պատրաստած հարցերը, և խմբերը կգնահատվեն նաև հարցերին ճիշտ պատասխանելու համար: Այս կետը կարևոր է, որովհետև դասի ընթացքում հնարավոր է, որ խմբերը չլսեն միմյանց, փորձեն միայն իրենց աշխատանքը լավ ներկայացնել:

Բացի այդ՝ այս փուլում յուրացվում է «Թատերգություն» թեման՝ դիտարկելով այն գրական սեռերի համակարգում և նրա տեսակները՝ օգտվելով **քարտեզագրման մեթոդից** և համապատասխան աղյուսակը լրացնելով/ տես գծապատկեր 1/: Քարտեզագրման արդյունքում աշակերտները կունենան համակարգված գիտելիք գրական սեռերի, թատերգության, նրա տեսակների մասին:

Այս աշխատանքներն իրականացնելուց հետո նոր պետք է սկսել «Պեպո» կատակերգության ուսուցումը: Մտագրոհի միջոցով ուսուցիչը խթանում է աշակերտների հետաքրքրությունը, վեր հանում նյութին առնչվող նախնական գիտելիքները, այն է՝ ինչ գիտեն ստեղծագործության, հերոսի մասին, որովհետև աշակերտներից ոմանք դիտած կլինեն համանուն կինոնկարը: Լսելով աշակերտներին՝ ուսուցիչը, աշակերտներին ոգևորելու, նրանց ուշադրությունը թեմային սևեռելու համար, հայտնում է, որ «Պեպո» կատակերգության ուսուցումից հետո որպես գործնական աշխատանք պետք է բեմադրեն հատվածներ այդ ստեղծագործությունից: Այնուհետև ուսուցիչը դասախոսության միջոցով ներկայացնում է կատակերգության կառուցվածքը, բովանդակությունը, կերպարները՝ հավելելով, որ երկի բազմակողմանի ուսումնասիրություն պետք է կատարեն ողջ դասարանով. աշակերտներից յուրաքանչյուրը կունենա իր դերակատարումը այդ աշխատանքում: Հանձնարարություններ տալիս ուսուցիչը այնպիսի բաժանում պետք է կատարի, որ յուրաքանչյուր աշակերտ ստանա իր կարողություններին համապատասխան աշխատանք, որն էլ կկարողանա կատարել: Եթե աշակերտն զգա, որ աշխատանքը բարդ է, իր համար մատչելի չէ, կհիասթափվի, կընկնի ինքնագնահատականը, կհրաժարվի աշխատանքը կատարելուց, իսկ հակառակ դեպքում կոգևորվի, հետաքրքրությամբ կլսի ուսուցչի հրահանգները, հաջողություններ գրանցելով՝ կարժևորի իրեն, իր աշխատանքը, և կբարձրանա ինքնագնահատականը:

Երրորդ փուլում ուսուցիչը աշակերտներին բաժանում է նոր խմբերի, յուրաքանչյուր խմբին տալիս է «Պեպո» կատակերգության պատճենահանված տարբերակից հատվածներ: Ուսուցիչը խմբերն այնպես պիտի կազմի, որտեղ լինեն և՛ ուժեղ, և՛ թույլ աշակերտներ: Հանձնարարությունն այսպիսին է. խմբի աշակերտները ընթերցում են բնագրից տրված հատվածը, համառոտում, դուրս թողնում այն հատվածները, որոնք այնքան էլ կարևոր չեն: Արդեն մշակված թերթիկը ավելի թույլ աշակերտները (իհարկե, «թույլ» բառը չպետք է բարձրաձայնել աշակերտների մոտ, խմբում բոլոր աշակերտների աշխատանքը պետք է կարևորվի, արժևորվի) արտագրում են բնագիրը: Այս գործընթացը

հսկում է ուսուցիչը, ուղղորդում, խորհուրդներ տալիս նրանց, որովհետև աշխատանքն այնքան էլ դյուրին չէ: Այնուհետև արդեն արտագրված հատվածից դուրս են գրում անհասկանալի բառերն ու քերականական ձևերը, ուսուցչի օգնությամբ գրում, սովորում դրանց բացատրությունները: Այս քայլի միջոցով ուսուցիչը նպաստում է աշակերտերի իրադրական խոսքի զարգացմանը: Բացի այդ, աշակերտներն ծանոթանում են լեզվի մյուս շերտերին, այս դեպքում՝ Թիֆլիսի հայերենին: Բառերը գրում են առանձին թերթիկների վրա, սովորում դրանք, հետո փոխանցում մյուս խմբերին: Այս աշխատանքը կատարում են 2 դասաժամում: Արդյունքում յուրաքանչյուր խումբ կընթերցի կատակերգությունից ևս մեկ հատված (2-րդ հատվածը դասագրքինն է), համառոտելով՝ հանգամանորեն կծանոթանա տեքստին, կսովորի անհասկանալի բառերի բացատրությունները: Այս աշխատանքի նպատակն այն է, որ աշակերտները ընթերցեն ստեղծագործությունից այլ հատվածներ: Իսկ որպեսզի ընթերցեն դասագրքի հատվածը, աշխատանքը տրվում է այլ կերպ: Տեքստը ուսուցիչը նորից բաժանում է 4 հատվածների (ըստ տեսարանների) և հանձնարարում խմբերին՝ կատարել նույնպիսի աշխատանք, բայց արդեն անհատական: Որպես տնային աշխատանք աշակերտներից յուրաքանչյուրը կունենա հատվածի համառոտած իր տարբերակը: Թույլ աշակերտներին կարելի է հանձնարարել ավելի փոքր հատվածներ: Տնային հանձնարարությունը քննարկում են խմբի ներսում, ընտրում լավագույն տարբերակը և, օգտվելով **խճանկար** մեթոդից, միացնում են մյուս խմբերի աշխատանքներին՝ ստանալով գրքի հատվածի համառոտ տարբերակը: Ավարտելով իրենց աշխատանքները՝ յուրաքանչյուր խումբ դասարանին է ներկայացնում իր հատվածի բովանդակությունը: Մինչ այդ ներկայացումը ուսուցիչը շեշտում է, որ աշխատանքները ներկայացնելուց հետո կտրվեն հարցեր, որպեսզի խմբերը լսեն միմյանց:

Չորրորդ փուլում, կրկին կիրառելով **քարտեզագրման մեթոդը**, ուսուցիչը խմբերին բաժանում է թերթիկներ, որոնց վրա պատկերված է կերպարի վերլուծության գծապատկերը (յուրաքանչյուր կերպարի համար մեկական թերթիկ, տես գծապատկեր 2): Հանձնարարվում է լրացնել դրանք՝ ներկայացնելով կերպարներն ըստ տրված հատվածի: Աշակերտները պետք է պատասխանեն հետևյալ հարցերին՝

1. Ո՞վ է, ի՞նչ է անում կերպարը,

2. Ինչպե՞ս է փոխվում կերպարը, ինչո՞վ է ավարտվում նրա գործելակերպը,

3. Ի՞նչ է մտածում կերպարը, ի՞նչ նպատակներ ունի,

4. Ինչպե՞ս են ուրիշները վերաբերվում կերպարին։

Ավարտելով աշխատանքը՝ աշակերտները հերթով ներկայացնում են կերպարների բնութագրերը՝ քննարկելով, վերլուծելով նրանց արարքները։ Գիտելիքն ամրապնդելու նպատակով որպես տնային աշխատանք ուսուցիչը կարող է հանձնարարել ոչ մեծ շարադրանք, որտեղ ներկայացվում է նախընտրած կերպարի բնութագիրը։

Այս բոլոր աշխատանքներից հետո անհրաժեշտ է կատարել անդրադարձ՝ ողջ թեման ամփոփելու համար։ Հինգերորդ փուլում աշակերտներին տրվում է ուսումնասիրած երկի վերլուծության գծապատկերը/գծապատկեր 3/, որում պետք է նշել «Պեպո» կատակերգության թեման, գեղարվեստական արժեքը, գրման ժամանակաշրջանը, պատմականությունն ու արդիականությունը, բովանդակությունն ու գաղափարը, բաղկացուցիչ մասերը և այլն։ Նույն խմբերով աշխատում են թերթիկների վրա, լրացնում գծապատկերը, այնուհետև ներկայացնում դասարանին։ Խմբերը լսում են միմյանց, լրացնում, դիտողություններ անում։ Լրացնելով գծապատկերի համապատասխան կետերի պահանջները՝ աշակերտները համակարգում են իրենց գիտելիքները տվյալ թեմայի վերաբերյալ։

Հաջորդ՝ վեցերորդ փուլն արդեն բեմադրության նախապատրաստումն է։ Դերային խաղի միջոցով աշակերտները պետք է ներկայացնեն հատվածներ «Պեպո» կատակերգությունից։ Ուսուցիչն այս ձևով աշակերտների մեջ հետաքրքրություն է առաջացնում դեպի թատերգական ստեղծագործությունները։ Ուսուցիչը նախապես այնպես պիտի կազմի խմբերը, համալրի այնպիսի աշակերտներով, որ հետո նրանք կարողանան բեմադրել իրենց հանձնարարված հատվածը։ Քանի որ աշակերտները շատ են, դերերը՝ քիչ, կարող են նույն դերը ստանձնել մի քանի աշակերտ, որոնք կներկայացնեն իրենց բաժին հատվածը։ Թույլ թե ուժեղ՝ սիրով են ստանձնում իրենց դերը, անկախ այն բանից՝ ունեն դերասանական շնորհ, թե ոչ, քանի որ ամբողջ դասարանն է մասնակցում բեմադրությանը։ Խմբի ներսում բաժանվում են դերերը և հանձնարարվում սովորել տրված հատվածները։ Անհրաժեշտ է, որ փորձերը կատարվեն ամբողջ դասարանի ներկայությամբ, որովհետև մի քանի անգամ լսելով այս կամ այն կերպարի խոսքը՝ մյուս խմբերի անդամները կյուրացնեն իրենց անծանոթ հատվածի բովանդակությունը, կերպարների խոսքը, նույնիսկ անգիր կսովորեն դուր եկած

հատվածները: Բացի այդ, դիտելով բեմադրությունը՝ ավելի ուժեղ կտպավորվեն կերպարները, նրանց արարքները:

Գծապատկեր 1

Գրական սեռեր				
Պատմողական	***Քնարական***	***Թատերգական***		
Պատկեր - գործողություն	Պատկեր- ապրում	Պատկեր -ներկայացում		
		Ողբերգություն	Կատակերգություն	Դրամա

Գծապատկեր 2



Գծապատկեր 3



Գեղարվեստական արժեքը
Արժեքային համակարգ
Գրման ժամանակաշրջանը
Թեման
Բովանդակության վերծանում,
Պատմականություն, արդիականություն
Բաղկացուցիչ մասեր
Արարված 1
Արարված 2
Արարված 3
Տեսարաններ
Տեսարաններ
Տեսարաններ

Եզրակացություն

Ինչպես արդեն նշել ենք՝ուսուցման գործընթացում այսօր կարևորվում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլև այդ գիտելիքները կյանքում կիրառելու, ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների և հմտությունների ձևավորումը: Այս գործընթացն իրականացնելու համար ուսուցիչը պետք է կիրառի զանազան մեթոդներ , հնարներ՝ աշակերտների մեջ ուսման նկատմամբ սեր, հետաքրքրություն , ոգևորություն առաջացնելու համար:

Ճիշտ է, ուսուցման նոր մեթոդները ուսումնական գործընթացը դարձնում են բավականին հետաքրքիր և աշխույժ, այնուամենայնիվ նպատակահարմար է համադրել ավանդական և նոր մեթոդները՝լավագույն արդյունքի հասնելու համար: Բացի այդ՝ մեթոդներն ու ուսուցման ձևերն ընտրելիս պետք է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները: Միջին դպրոցի սանը որակապես տարբերվում է տարրական դպրոցի աշակերտից: Կրտսեր դպրոցականը իր բնույթով խիստ տպավորվող և ներշնչվող է, զարգացած չէ նրա ինքնուրույնությունը: Դեռահասության տարիքում, ընդհակառակը, անձի ինքնուրույնությունը վառ դրսևորում է ձեռք բերում: Այս տարիքում սովորողները ինքնուրույն գործունեություն են ծավալում և անընդհատ ձգտում են ընդարձակելու դրա սահմանները: Սակայն դեռահասն իր պատրաստակամությունը չի կարողանում գործնականում կիրառել, քանի որ չի տիրապետում ուսումնական գործունեության բազմազան և նոր եղանակների : Ուսուցչի խնդիրն է դեռահասին սովորեցնել ուսումնառության այդ նոր եղանակներն ու ձևերը և թույլ չտալ, որ ուսման նկատմամբ հետաքրքրությունը հանգչի:Մանկավավարժը մշտապես ականատես է, թե դեռահասն ինչ բուռն ոգևորություն է հանդես բերում նոր նյութի հանդեպ, բայց ինչքան արագ է նա հիասթափվում դրանից: Անհաջողության հանդիպելու վախը հաճախ երեխային ստիպում է, որ խուսափի դասին ներկայանալուց, պատրվակներ որոնի դպրոց չգնալու համար: Ուստի ուսուցիչն ամեն ինչ պիտի անի աշակերտին դպրոցին կապելու համար:

Ուսուցումը համագործակցային մեթոդներով թերևս բարդ գործընթաց է, սակայն անցնում է սահուն, հագեցած, կարևորը՝ աշակերտները այդ ընթացքում աշխատում են սիրով, նպատակաուղղված, պատասխանատվությամբ և հաճույքով: Իսկ եթե

ուսումնառության ընթացքում կա սեր, ձգտում , ոգևորություն, անհնար է , որ այդտեղ չլինի արդյունք:

Օգտագործված գրականություն

1. Ասմարյան Լ., Գաբրիել Սունդուկյան: Կյանքը և ստեղծագործությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980, 121 էջ:
2. Բալյան Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան, Լույս, 1983, 456 էջ:
3. Մախչանյան Հ., Հայ գրականության ուսուցման պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1979, 447 էջ:
4. Չոպանյան Ա., Երկեր, Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1966, 578 էջ:
5. Սունդուկյան Գ., Պեպո: Կատակերգություն 3 գործողությամբ, Երևան, Հայաստան, 1971, 139 էջ:
6. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, Լույս, 1980, 564 էջ:
7. Տեր-Գրիգորյան Ա., Ընթերցանության մեթոդիկա, Երևան, 1978, 246 էջ:
8. https://www.kaganonline.com/free_articles/dr_spencer_kagan/281/Kagan-Structures-A-Miracle-of-Active-Engagement

Բովանդակություն

Ներածություն 2

Համագործակցային ուսուցման առանձնահատկությունները 5

«Պեպո» կատակերգության ուսուցման առանձնահատկությունները 8

Երկի ուսուցումը համագործակցային մեթոդներով 10

Եզրակացություն 18

Օգտագործված գրականություն 20

Բովանդակություն 20